

զիններու երջանկութիւնը կը խորտակէ, ներկայացնելով կեանքը ցաւերու անկերջ շղթայ, յուսախաբութիւն, պատրանք ու տառապանք: Այդ իր սովորական շէշան է, իր տխուր յանկերգը:

Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին Ահարոնեան հայրենիքի կենսական հարցերով մտահոգուած է եւ ամբողջ էութեամբը տարուած ազատագրելու Հայաստանը ու անցընելու դայն ազատ ու անկախ ազդերու կողքին:

Հոգեկան ինչ ուժեղ ապրում այդ օրերուն. Ահարոնեան մէկ նպատակ ունի, խանդավառել հայ ոգին, զօրացնել կամքը եւ արծարծել սէրն ու փառքը հայրենիքի վսեմ դադափարականին՝ հայ երկտասարդութեան մէջ. այդ ապրումներու ծնունդն է Հայրենիքիս համար հատորը, ուր կան ամփոփուած իր ուղերձները, իր խորհրդածութիւնները: Այդ դադափարականին զոհուած կեանք մ'է Ահարոնեանին, որ ճաշակած է բանտերու դառնութիւնը, մոռյալ դանդիւր եւ միայնութիւն՝ յոյսով յաղթական ելլելու ամէն խոչնդոտներու դէմ, հաւատացած որ սրբազան դատ մ'է հայունը, որուն առջեւ պէտք են խոնարհիլ ու յարգել իր իրաւունքը, ամէնքը ամէնքը: Իմ բանտը, Պարտուածները այդ իր անխախտ հաւատքին վկանները, եւ միանգամայն արձանագրումը իր կրածներուն ի սէր հայ ազգին: Իր ճիշդերով եւ հայ երկտասարդ կամաւորներու հերոսութեամբ՝ ստեղծուած է Մայիս 28ի պանծալի յիշատակի օրը, հայ ժողովուրդի դաւաճող ձկնորմներու յաղթանակը. Ահարոնեան զլուխ է հայ պատուիրակութեան որ կը մեկնի Պոլիս, ստորագրելու խաղաղութեան համաձայնագիրը: Ան զլուխ է դարձեալ հայ պատուիրակութեան, ստորագրելու համար Սեւրի մէջ խաղաղութեան Դաշնագիրը ուրիշ ազգերու ներկայացուցիչներուն հետ: «Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս, կը զրէ ան իր օրագրին մէջ. երեսուն տարուայ պայքարս, բողո-

քըս, տառապանքս եւ յոյսերս պատկերին փառաւոր յաջողութեամբ...»: Ստուգիւ ամէնէն երջանիկ հայն եղաւ որ նախնիքներուն երազը տեսաւ իրականացած իր անձին մէջ, բայց եղաւ միանգամայն ամէնէն դժբախտը եւ յուսախաբը երբ այդ ձեռք բերուած անկախութիւնը կարճ ատենուան կեանք մը ունեցաւ:

Ահարոնեան կ'առանձնանայ դարձեալ ինքնիր մէջ, կ'ապաւինի հայ զիւղի իր յիշատակներուն: 1926ին իր ձամբարդը երեք պատմութեանքներով, յետոյ Կարուշկը, իմ գիրքը հատորներով կը փոխադրէ՝ մեզ զիւղական կեանքին ու հոգեբանութեան մէջ, անգամ մը եւս սիրովութեամբ համար կարծես անոնցմով: Իր քաղաքական յուշերը կ'ամփոփէ Քրիստափոր Միքայէլեան, Բաֆֆի եւ Անդրանիկ զործերու մէջ:

Մեր նպատակը չէ անշուշտ կատարեալ համապատկերը տալ Ահարոնեանի բովանդակ արտադրութիւններուն, այլ համառօտ ակնարկով անցնիլ, ցոյց տալով իր ուղղութիւնը, իր նիւթերու նկարագիրը: Իր կեանքի առաջին շրջանին փորձած է նաեւ թատերական սեռը, Արցունքի հովիտը, Ուխտուածներ, Սեւ քոչուրը կամ Ոսկի հէֆեաք, Պատրանք կամ Մեռելները խօսում են կտորներով:

Երկտասարդական օրերուն կը պատկանին այնքան խանդավառ ոգւով զրի առնուած իր ճանապարհորդական ու տեղադրական յուշերը Խաղիայում, եւ Շվեյցարեան գիւղը խորագրիներու տակ, որոնց մէջ նկարագրական մեծ արտեստ դրած է: Եթէ կաթուածը չզար ու չզգեսնէր զինքը, Ահարոնեան չէր թողուր զրիչը ձեռքէն ու դեռ ինչե՛ր իր զիւղէն, ինչե՛ր իր հասուն մարդու տպաւորութիւններէն պիտի չյանձնէր թուղթի: Ասոր ապացոյց են Արագիլները (Հայրենիք, 1927. թ. 11), Ողջակեղը (անդ, 1928. թ. 6), Խաղաղական էսկիզներ (անդ 1928-29) եւն., որոնք թէեւ ոչինչ կ'աւելցնեն իր արդէն զեղարուեստական արտադրութեանց վրայ, սակայն պի-

տի ծառայէն ամբողջացնու իր յուշերը, իր կեանքի պատմութեան մանրամասնութիւնները:

Ահարոնեան միակն է մեր զրոյներուն մէջ որ ճանչցուած ու սիրուած է հայ միջավայրէն դուրս ալ, իր համբաւը առած է միջազգային ծառայ, առոր ապացոյց են Փրանսերէն, Կերմաներէն, անգլիերէն, ռուսերէն, չեխո-սլաւերէն, պուլկարերէն եւ յունարէն թարգմանութիւնները:

Յաջորդով պիտի տեսնենք իր զրակահոլութեան զեղարուեստական նկարագիրը:

(Շարունակելի)

Հ. Մ. ՃԱՆԱՇԱՆ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Յակոբ Օշական կը վախճանի Հայէսլի մէջ՝ Փետրուար 17ի զիւշերը սրտի կաթմածէ մը, որմէ շուրջ տասը տարի է Վեր կը տառապէր:

Ծնած Պրուսա 1883ին, աղքատ ծնողաց զաւակ. ձեռք բերած է, կարելի է ըսել ամբողջութեամբ, իր մտաւորական զարգացումը՝ լոկ իր ինքնաշխատութեամբ: Զբաղած է ուսուցչութեամբ իր ծննդավայրին մէջ, յետոյ Պոլիս, եւ ամէնէն վերջն ալ Երուսաղէմ:

Բազմաթիւ են իր թողած զործերը, պատմութեանքներ, պատկերներ, քննադատական էջեր, վէպեր, վիպակներ, թատերական գործեր, որոնց բոլորին ալ ուղած է հասցնել իր շունչը, զրազել անոնց մարմինն ու զոյութիւնն տալու մտահոգութեամբ եւ նաեւ յաւակնութեամբ՝ վերադանցելու իր դարը, իր ժամանակակիցները, ըլլալ նոյնիսկ չհասկցուած իր օրերուն, որպէսզի յաջորդ դարերը հիանան իր վրայ՝ իրեն ժամանակները կանխող մեծատաղանդ զրազէտի մը: Այսպէս ան կը մտածէր իր մասին:

Անոր վերջին կարեւոր գործերը՝ ուր

ամփոփեց իր խիղախ քննադատական տեսութիւնները՝ եղան Համապատկեր արեւմտահայ գրականութեան, եւ Հայ Գրականութիւն. անոնցմէ դատ իր կեանքի սկզբնական շրջանին տուած էր Խոնարհ - ները, Խորհուրդներու մեհեանը, Մնացորդացը անաւարտ ու երկարապատում, Հարքէնքներու շարքը կարգ մը հայ մատենագիրներու, որոնց հարուածը իջեցուցած ատենը շատ անգամ անտեսած է ժամանակը, պահանջները անոնց ապրած դարուն կամ շրջանին: Հիմա որ արդէն բաւական ժամանակ անցած է իր մահէն, — եւ որուն արձագանդը ցարդ «Բազմալիկ» չկրցաւ տալ իր սիւնակներուն մէջ, թերթիս նախընթաց թիւն արդէն լրացած, շարուած ու տպագրուած ըլլալով մահուան բոթը առած պահերնու — անշուշտ Օշականեան քննադատութեան: Արդէն իր կենդանութեան, երկու հոսանք կողք կողքի ապրած են իր շուրջ, համակիրներու եւ հակառակորդներու, որուն յայտնի ապացոյցը տուին անոնք իր զրական քառասունակը տօնախմբելու եւ չտօնախմբելու պայքարին մէջ:

Օշական պայքարող էր, եւ խիղախ յարձակող իր քննադատի առարկան մէջ, բայց մեզի կը թուի թէ կան յայտնի չափազանցութիւններ, քմահաճոյքներ հեղինակները արժեքաւորելու մէջ, որոնց օր մը մտադիր ենք անդրադառնալու: Բազրա - տունի եւ Հիւրմիւզ, — որ մեր դասական շրջանի զրականութեան տիպար ներկայացուցիչներն են, հաւատարիմ իրենց արուեստին, իրենց մտայնութեան, աւելի ճիշտ դասական ճաշակին եւ ըմբռնումին, ինչպէս են բոլոր իրենց նմանները ուրիշ ազգերու մէջ, — երբ իրմէ կ'անդոսնուին եւ իրր անարժէք կը նետուին մէկդի, ապացոյց են թէ Օշականի մէջ կը գործէ կողմնակցական ոգի, տեսակ մը անհասկացողութիւն ժամանակներու, զրական շրջաններու: Նմանապէս զարմանալի է բոլորու-

վին իր գերբքը Ալիշանի հանդէպ՝ երբ դայն
կը համեմատէ տիրացու Տէրադեմցի մը
հետ, համարելով զանոնք միեւնոյն ուղիի
ու մտայնութեան տէր մարդեր, որոնք ե-
կած անցած են հայ զրական կեանքի պատ-
մութեան ընթացքին: Զարմանալի է նաև
Շանթի «Հին աստուածները» թատերական
եղական զործին նկատմամբ իր բռնած
գերբք. եւ այսպէս երկար է շարքը, որոնց
մասին խօսելու տեղը չէ այս հակիրճ տո-
ղերու արձանագրութեան մէջ: Միւս կող-
մէն հայ զրականութիւնը Օշականի երախ-
տապարտ ըլլալու է պարզապէս այն զա-
ղաւարին, այն ձեռնարկին համար՝ որ
մտցուց ան մաքրագործումի սկզբունքը
զործադրելով. եթէ ան միշտ ուղղադատ
չեղաւ այս սկզբունքի զործադրութեան
մէջ, սակայն ոտքի բռնեց սկզբունքը, եւ
հոս ան մեծ արժէք ունի:

Ան կատարեց իր դործը, թողուց տալա-
դիր եւ անտիպ բաղմամբ իւ երկեր որպէս զի
ուրբէններ ալ իրաւամբ զինքը քննադատեն :
Եթէ սրտի տկարութիւնը չզոյեառնէր զինքը ,
ան թերեւս ունէր իրադործելիք ծրար իրեներ
եւ թերեւս աւելի ալ կարող զբաժ անտիպ-
ներու հրատարակութիւնը՝ պիտի մեկնէր
աշխարհէն :

Անշուշտ Գաղութահայ Միութիւններ եւ
Կամ Հայ Սովետական Իշխանութեան Պետ-
հրատը պիտի փութան հատորներու մէջ
ամփոփել իր ձեռագիրները, կորուստէ
փրկելու համար դանտնք:

«Բաղմալէսը» կը մաղթէ հանդիսոտ իր
աճիւններուն :

to U β .

ԷԶ ՄԸ ՅՈՒՇԵՐԷՍ

Զուելիցեր լալէյն չիւրազարձիս իննրսունական թուականներուն), ուր մեկնած էինք Հասպիւղի եւ շրջականերուն ջարդերէն յետոյ, արդարեւ մասնաւորապէս զգացինք այն ճնշիչ մթնոլորտը որ Սուլթան Համիտի բռնապետութիւնը ստեղծած էր ու հետզհետէ աւելլի կապարային կը դառնար եւ հայրենաբաղձութիւնը կու տար լալէյն հորիզոններու. զարմանքով ու հրեմուանքով զխտեցի թէ Պոլսոյ հայ զբաղանութիւնը մնացած էր կենսունակ:

Իրաւ է որ Հայրենաշունչ, խանդավառ
 զրուծիւններ միմիայն մտաւորականներու
 զարակներուն մէջ զոյգւծիւն ունէին, սա-
 կայն կային միշտ կարող զրողներ, կային
 բանաստեղծներ, կային բանասէրներ :

Ասուղներու պէս զրաւան, փրկութեամբ
յաւան պարբերաթերթեր կու գային ու
կ'երթային, «Մասիս»ը, Տիգրան Արփիա-
րին «Մասիս»ը կը մնար մշտական: Ծլած
էր նոր ծաղիկ մը, Արամ Անտոնեանին
«Ծաղիկ»ը: Ան կոչուած էր զրաւան խրն-
ջոյք մը յայտու:

«Արեւելք» ու «Բիւզանդիոն» երկու մըր-
ցակիցներ, երկու աջքառու օրաթերթեր,
Հակառակ ամէն սեղմումի, Հակառակ նոյն
խաչ Հայ «ժողովուրդ»ներու տեսական Հա-
լածանքներուն, միջոցը կը գտնէին ճոխ ու
չահեկան ըլլալու. անոնք անունդն էին մը-
տաւորականութեան, որ կը ցաւիմ ըսելու,
աւելի ստուար թիւ մը եւ աւելի նշանակե-
լի տարր մը կը կազմէին, քան յետոյ ոչ
մէկ տեղ:

Հոն մտաւորականը զիտէր մնալ իր մա-
կարդակին վրայ, զիտէր թէ իր ունեցածը
բարոյական ոյժ մ'է որ զբամոյլ չի ստաց-
ուիր, և ժողովուրդն ալ զիտէր յարգել
մտքի, զրիչի մարդը, աւելի քան բոլոր
մեծատունները, որոնք իրենց կարգին զբա-
ղէտները կը մեծարէին :

«Արեւելք» ունենալով արտօնատէր Զա-
րեհ ՆՈՒՆՈՒՖԵԿԱՆ ԷԼ խմբադիր Հրանդ Ա-
սատուր ԷԼ Գրիգոր Զօհրապ, ընտրեալ աշ-
խատակիցներով աւելի զրական էր, թե -
րեւս աւելի աղնուական, աւելի նրբանուրբ
խնամքով պատրաստուած, բայց «Բիւզան-
դիոն» իր կուռ խմբադրականներով որոնց
մէջ Հկար երբեք որ Է Ըիդ, այլ հոն հե-
ղեղի մը պէս կը հոսէին ընկերական, քա-
ղաքական երբեմն ալ զրական նիւթերու
չուրջ խորհրդածութիւններ, յստակ, վը-
ճիտ, համոզող, աւելի ժողովրդական էր
ԷԼ սիրուած: Բիւզանդ Գեհեան իր օրա-
շարժի տաղանդը ի յայտ կը բերէր անմը-
ցեկիօրէն: Ան կարծես ծնած էր խմբադիր:

Աղեքսանդր Փանոսեան իր ճոխ յանդերու
տարաւիւր կը թափէր ամէն կողմ. ունէր
հիացողներ, եւ իր ոտանաւորները կ'ար-
տասանուէին դպրոցներու մէջ, միջակ
միտքերը կը զմայլէին անոր վրայ:

Գրելիզոր Զօհրապէի նորալէսերը ձեռք
 ձեռք կը խլուէին. անոր աշխարհաբարը
 թէեւ փոքր ինչ տկար, բայց ընդհանուր
 յանդուզն յղացումները, եւրոպականացած
 ուղին, խորունկ հոգեբանութիւնը, անոնց
 թանկագին արժէք մը կու տային. ան կը
 պատմէր առանց ջանք ընելու, առանց հիւ-
 ցընելու տենչի, եւ թերեւս ասոր համար
 մէկ հատիկ էր:

Լեւոն Բաշալեանը, դեռ չառ երկրորդ
ասարդ, աշխարհիկ, դրադէտի մը բոլոր ան-
բասողիւս շնորհքներով օժտուած, իր ան-
բասողիւս ոճով, վաղելիքով դրելու կեր-
պով կը նկատուէր վերանորոգիչն աշխար-
հաբարին, անոր եղնիկը, ինչպէս ըսած էր
Չօպանեան. ինքնայատուկ, մաքուր, արե-
ւելքի մարդարիտներու պէս վաղուէն էին
անոր դրածները :

Սիպիկ, անմոռանալին Սիպիկ, համար
տաղանդ էրխտասարգ կինը , գրական
խումբին մէջ թերեւս լաւագոյն գրաբար-
դէտը , ճոխ բառերու մթերքով , կը զբէր-
ոտանաւոր թէ արձակ , չողչողուն ու գե-
ղեցիկ լեզուով մը , միայն թէ... այնպէս

ենթադրեւէ կու տար թէ քրթողական հուրը
չէր սարսուցեցէր զինքը զրաժ ատենը, այն-
քան աղոճուր, Վսեմօրէն աղոճուր էին գըր-
ուած քները :

Զապէլ Եսայեանի հաղիւ թուիչք առած
կարողութիւնը, որ անբաղդատելի պիտի
լլար օր մը, սկսած էր ճառագայթել ինչ-
պէս զարնան այլը արեւելքի երկնքին վը-
րայ:

Սրբուհի Տիւսարի վէպերը, առաջինները ուր թրքահայ կին մը հրատարակած ըլլայ, մեծ աղմուկ հանելէ յետոյ, այլեւս զրեթէ ոչ ոք կը կարդար, հակառակ սլաշտպանած դեզին յոյժ շահեկան ըլլալուն: Սակայն Տիկին Տիւսարի անունը իւր շուքական էր մեր ամէնուն:

Տիպրան Կամսարական , ձեռնոցաւոր , սկսած էր այն պահուն արդէն դէմք մը դառնալ մեր հորիզոնին վրայ , աղբասիրական (Համիտի ներածին չափ) մասնաշա-տուկ ջանքերով սիրուն յօդուածներ , պատմուածքներ կը զրէր , որոնք ինքնու-րոյն էին . իր գլուխ գործոցը պիտի ըլլար «Վարժապետին աղջիկը» , քիչ մը չափա-նշուած հոգեբանութեամբ :

Վահան Թեքեանը, վախճանագիր գրող, հաղորդագրություն կը գրէր Երթնա՝
ուսած մը, ան որ մեր բանաստեղծութեան
ըրմասպետը պիտի ըլլար յետոյ :

Արշակ Զօպանեան իր ոսկի զրիչը վարդէ-
հեղուկի մէջ թաթխած, արդէն զմայլե-
ցուցած էր մտաւոր աշխարհը: Տէմիրճի-
պաշեանի արժանաւոր աշակերտը, անոր
լոյս հետքերուն վրայէն կ'երթար, ներ-
շնչուած ու հրապայցիկ:

Արվիրար Արվիրաբեան այլևս այն ծառն էր նույաբերձ որուն շէկ տերեւները շողալնի վերածուած, իրեն հիւսած էին սրտալնիս անմահութեան :

Կային ղեռնոր գրողներ զբաղան բոցով
 հրդհուած, որոնց վրայ շատ անգամ պաղ
 ջուրի տուջ մը կ'իջեցնէր Թուրք զրաքըն-
 նութիւնը :

Պոլսոյ մտաւորականները ընդհանրա-